ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Սոնա Մինասյան, ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության հաշվապահական հաշվառման մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2024 թվականի դեկտեմբերի 3-6-ը

3. Հրավիրող կողմը

Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Համաշխարհային բանկի Ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոնի կողմից կազմակերպված՝ Համաշխարհային բանկի, Ավստրիայի և Շվեյցարիայի կառավարությունների կողմից համատեղ մշակված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հերթական աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

- Հանրային հատվածի կազմակերպություններում կայունության հաշվետվողականության համակարգի մշակման ընթացիկ կարգավիճակը և սպասվող զարգացումները,
- Հաշվապահական հաշվառումը պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում և դրանց ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված առանձնահատկությունները,
- Պահուստների և պայմանական պարտավորությունների հաշվառումը,
- Հաշվապահական հաշվառման կրթական ստանդարտների փոփոխությունները,

- ԵՄ անդամ պետությունների և Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի անդամ-պետությունների հանրային հատվածի հաշվապահական հաշվառման կրթական համակարգերի փորձի ներկայացում,
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման (PULSAR) ծրագրի հետագա քայլերի քննարկում:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և կայուն զարգացման հաշվետվողականության հետ կապված վերջին փոփոխությունները և զարգացումները, ծրագրի շահառու երկրներում հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտի բարեփոխումների ընթացքը, արդի հիմնախնդիրները: Ներկայացվել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները և դրանց ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ կապված առանձնահատկությունները: Քննարկվել են հաշվապահական հաշվառման կրթական ստանդարտներում տեղի ունեցած և նախատեսվող փոփոխությունները, ինչպես նաև ներկայացվել է ծրագրի անդամ-պետություններում, այդ թվում՝ Հայաստանում հաշվապահական հաշվառման կրթական ծրագրերում իրականացված բարեփոխումները և առաջիկայում նախատեսվող փոփոխությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում առաջարկություններ են ներկայացվել հաջորդ աշխատաժողովի ընթացքում քննարկման ենթակա թեմաների ու ուղղությունների վերաբերյալ, որոնք առավել հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում PULSAR ծրագրի մասնակից երկրների մասնագետների և մասնագիտական համայնքի համար:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Դեկտեմբերի 11, 2024թ.